

## 19. ՁԱՔՅԻ ԱՊԵՐԸ

Օխտանասունը հենգյ տրեկան Զաքյի ապերը կողի պռավածինի, ամմա շատ աշխադասեր ա, միշտ ընգրան հանդին կըտեսնաք։ Թա հոնձին վախտը, թա բաղեն մանանը կըտրեյիս, թա խոտ հնձեյիս, տանը մին օր կենըմ չի։

Մին դոնըմ Զաքյի ապերը հոնձ ա քյինում։ Էշը փլանըմ ա, հայրան յրան քըցում, չինը հայրին մաչին տնում, եր ինում էշը, քյինում։

Զաքյի ապերը վեր ծաքյին հըսնում ա արտը, դաստի սկսում ա հոնձը, մինչը քյըսօր։ Քյսօրավախտը ետ ա տրեռնում, փնշաքեն տակեն նստում, կյուշը տուս օնըմ, մածումը ածըմ կյուշին մաչը, հացը նի փրթում, ճիրան խառնում նհետը, քթոլը յոր օնում, թա օտե, բուրդան տրեսնըմ ա կըռքնեն թողայ ա տանը, մրննան ընգալ ա, թա կըռքնեն տինի պիրանըմը։ Խըեղճ Զաքյի ապերը եր ա կենըմ փրթուշը թողում ընդեղ, մին խիլլա տեղ զարբ անըմ, շենան մուտանում սկսում կընդանը ծեն տալը։—Հե-հե՜՜ Բախճադյուլ, հե՜՜՜ Բախճադյուլ։

Շատ ծեն ա տամ, վերշը ուրան կնեդյը՝ Բախճադյուլը ըսկանըմ ա։— Ադա Զաքյի՜, հի՞նչ ա, էտ հի՞նչ ա, ասե ասե՜, էս ըմ ըսկընայիս, ասե տեսնամ հի՞նչ ըս օղում։

Զաքյի ապերը՝ թա.— Ախչի, կռքնես է՜, կռքնես պե՜ր, պե՜ր, հաց ըմ օտում, ճելլի ըրա է՜՜՜, ճիլլի՜՜՜ եք։

Բախճադյուլը նի յա մրննըմ տոն, թա կըռքընեն պիրի։

Զաքյի ապերը քյինում ա, տրեսնում փրթուշը լոխ ղուշերը կերած, մնում ա վա՜յ-վա՜յ ընեյիս։ Ետ ա տրեռնում, թա քյինի Բախճագյուլին ծեն տա, հանցու վեր նոր մածուն պիրի, տրեսնում Բախճագյուլը նի ա հսալ, կյամ ա։

Ասում ա.— Ադա՜, Զա՜քյի, էտ հի՞նչ ա պտահալ։

Ասում ա.— Ախճի, պա տրեսնում չը՞ս, էս շան տղեն ընդրնեն հի՞նչ ըն ըրալ, փուրթուշը լոխ կերալ ըն։

Բախճագյուլը ասում ա.— Վեչինչ, ա՛ մարթ, ջանըտ ինի սաղ, ըտրա հետե գա՜րդը-զեյիգ մ՝ անել, կքյինիմ մին էլ պիրիմ, տու լհա՜ լավ հոնձ ըրա, էս կառավարութունեն ջանեն մատաղ, հանց օրենքյ ա քըցա՜ալ, հինչու օղըմ ըս, կա ու կա՜, պռաված, ծեռքա ընգած ջըվըրներեն էլ ա մհա՜ալ քցում, եշըմ ա, պահում ա, հատե՜ պըռավալ ըս, սաղ կոքնետ վեր ա տեռալ, վեր էս օրենքյը չինար, քյըեզ հո՞ւ իտի կոքնե կտա՜ր։ Էն պիրիշակ Նիկալայեն վխտեն լհա՜ սաղ-սըլամաթ մարթուցու հափուռը պող ին ածում։ Պրիստավը, քյոխվան մեզ շատ տընչեցեն, դե մհենգյ տրես մինը-մինին անա վախըմ ը՞ն, լոխ էլ մին ջուռա ջըվըրնե յըն, հալալ քըրթնընքըմ ըն, հալալ օտում, վեչ մինը մինին աշխադանքը օտում չի, հու վեր անըմ ա, էն էլ օտում ա, հու վեր անըմ չի, օտում չի, պըրծավ քյինից։ Դե էլ մտածիս վեչ, մին պատառ էլ հնձի, քյինիմ մեր տանան մին պոլիգյ մածուն պիրիմ, համ էլ ասըմ ըն կոլխոզը պանեը պժենըմ ա, քյսօրա ետ քյինիմ ստանամ, էլհա պիրիմ։ Ադա՜, թա նըղացալ ը՞ս, ինձ տո պատառ էլ յըես հնձիմ։

— Զէ՛, ա կնե՜գյ, տու քյինի մեր հեյվաններեն ուրուն ըրա, լավ պահե, վեր միկա կաթնը տա, էս հունձեն վախտը մածունն ա ինձ պահում, համ էլ ճելլի քյինի, դե մհենգյ էլ կոքնես պերալ ըս, մածուն չիկա, ճելլի ըրա հացրու մին էս արտեն ջանեն ինիմ։